ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

02 դեկտեմբերի 2024թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ԱՁ Արամ Խաչատրյանին

Հարգելի Արամ Խաչատրյան,

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և ԱՁ Արամ Խաչատրյանի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2024թ.-ի հոկտեմբերի 18-ին կնքվել է **ԱՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/26-1** ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները: Սահմանված ժամկետում պայմանագրի 1-ին և 4-րդ չափաբաժինների՝ տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանքների մատակարարում չի եղել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով ՀՀ Արմավիրի մարզ Արմավիրի համայնքապետարանը հարկադրված է 2024թ.-ի դեկտեմբերի 03-ից Պայմանագիրը նշված չափաբաժինների մասով միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 5 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար **16650 (տասնվեց հազար վեց հարյուր հիսուն)** ՀՀ դրամի և **11100 (տասնմեկ հազար մեկ հարյուր)** ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին **(ՀՀ Ֆինանսների նախարարություն 900335201092)**:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն ԱՁ Արամ Խաչատրյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**